

ՀԱՅՏԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ



ՄԻԻԹԱՐ ԳՕՇԻ ԱՌԱՅԱԳՐՔԻՆ ՄԷՋ

(Տպ. Վահեթիկ 1854)

1. Թիվերունք

Թիրդունք որքան յօղս շրջին, ոչինչ գործեն փնաս. իսկ խոնարհեալ յերկիր՝ ծնանին թրթուր ապականարար երկրի (Առակ ճի)։

Թիրեան բառին յոգնակին է, ինչպէս կը նշանակէ նաև Առձ. Բառ. Զունի ՆՀԲ. Բայց պէտք չէ կարծել թէ բառս սխալագրութիւն մը Ելլայ, որովհետև մինչև այսօր Զէյթունի բարբառը կը գործածէ բիբլիոթեանակ բիբլոն ձևին։

2. Կէտ

Բազմութիւն անդէոց ժողովեալը ի ներքոյ անտառաց՝ հրապարակախօս լինէին, հնարս իմանալ՝ ի վտանգէ զերծանել ի գայլոց. և լուծալ գայլոց զարհուրեցան, գուցէ արդեօք լուծցին Երուսթիւնը նոցա ի հնարից նոցա. և մի ոմն ի ծերոց նոցա ասէ, եթէ ոչ աղօթիցէ՝ զի յինքեանց պատճառէ ցրուեսցի, հօքը ի խորհուրդ նոցա։ Եւ յաղօթա կացեալ, և նուիրեալ պատարագս Աստուծոյ, զմիջոցաւ աւուրն մտեալ ի նոսա կիտք. և փախուցեալը ցրուեցան խորհուրդը նոցա, և ուրախ եղեն գայլը (Առակ ՀԹ)։

Կէտ բառին ծանօթ նշանակութիւնները բնաւ չեն յարմարիր հոս, Բոլորովին նոր բառ մըն է, որ չգիտեն բառարանները. պահուած է միայն Ղարաբաղի բարբառին մէջ՝ կէտ ձևով. կը նշանակէ «մեղուի մեծութեամբ, դեղին գոյնով տեսակ մը ճանճ, որ թէ՛ գլխուն և թէ՛ յետույքին վրայ խայթոց ունի. կը յարձակի էշերու, տաւարի և հորթերու վրայ, որոնք անոր պատճառած ցաւին սատկութենէն կը սկսին փախչիլ»։ Ասկէ են՝ կէտ անեյ

(Փանձակ, Ղարաբաղ) «հորթերուն յանկարծ փախչիլը», կէտիլ (Ղարաբաղ) «արագ ու յանկարծ փախչիլ» (մարդոց համար կ'ըսուի). Օր. Տեսաս որ քսեմ վատ է, կէտեց։

ՄԻԻԹԱՐ ԳՕՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԿՐՔԻՆ ՄԷՋ

(Տպ. Բաստաման, Վրէշտ. 1880)

1. Ազաւորող

Առաջին դաս պաղատին... դիարբ... և գործ է նոցա տանել յառաջ զագաւորողն և գայլս՝ զոր խնդրէ արքայն (էջ 262)։

Բաստաման ծանօթութեան մէջ կը յիշեցնէ որ այսպէս է բոլոր օրինակներուն մէջ, միայն երկու ձեռ. կը գրեն «զթագաւորողն», մէկ ձեռ. պարզապէս «տանել յառաջի գայն» զոր խնդրէ արքայն։ Սըմբատ Գունդատապի թարգմանութեան մէջ այս բառին տեղ դրուած է «զհաքնելիքն», որուն հետեւելով Բաստաման, բառը կը մեկնէ «հանդերձապետ, թագաւորին զգեստ հագցնող պաշտօնեան», իբր պակսիմ բա՜յն։

Բոլոր ասոնք սխալ են։

Ազաւորող կը ծագի ազատիկ բայէ մը, որ է ազնոյիկ կամ այդոյիկ «թագաւորին քով ունկնդրութեան երթալ», ազաւորող «թագաւորին ներկայացող անձը՝ խնդրը մը մատուցանելու համար»։

2. Աճ

Եւ եթէ անասուն բերեալ իցէ կինն, զգլուխն առցէ և զաճն յերկուսն բաժանիցն յաղագս աշխատելոյ ի պահելն (էջ 98)։

Իսկ կենդանիք՝ կամ անաճ և անմահ համարեսցին, և կամ՝ թէ անեալ իցէ և ոչ պակասեալ՝ զգլուխն առցէ և զկէս աճիկ, և կէս աճիկ առնն լիցի (էջ 291)։

Աճ՝ կը նշանակէ ուրեմն «անասուններուն բնական աճումով աւելցած գումար»։

րը», անաձ «չաճած, չաւելցած, չշատ-
ցած»:

3. Անկարգ

Ձի որդւոյ անկ է ժառանգ լինել՝ թէ
իցէ, ապա թէ ոչ իցէ, դստերն՝ որ տա-
կաւին տան իցէ անկարգ (էջ 371):

Անկարգ «չկարգուած, չամուսնացած,
ազապ»: Ասիկա կը ցուցնէ նաև հատուա-
ծին շարունակութիւնը. «իսկ արտաքս
գնացեալն և առն եղեալն՝ երկու դուստր՝
միոյ դստեր զբաժին առցեն»:

4. Աւաջնորդ

Եւ զարնան սերմանոց վաճառեալ և
եղեալ ի միդուոց, մինչ ի տասն օր կամ
ի քսան փորձի, վճիռ վկայիւր հաստա-
տիցի, որպէս զի մտանեկն և ելանեկն ու-
ղիդ ցուցցի, հաստատիցի վաճառն: Ապա
թէ թիւրութեան յաւուրան վճռին կարծիս
լիցի գողութեան և մահու առաջնորդին, ի
վաճառողն դարձցի (էջ 368):

Առաջնորդ, ինչպէս Բաստամեան ևս կը
ցուցնէ, կը նշանակէ «մեղուներուն թա-
գուհին, պարսմայր»:

5. Առուզնայք

Այս բառը գործածուած է մէկ անգամ
դատաստանագրքին ձեռագիրներէն մէկուն
մէջ. ՂԶ գլխուն վերնագիրը բնագրին մէջ
է «Յաղագս դատաստանաց առեանկաց»,
իսկ նոյն ձեռագիրն ունի «վասն որ առ-
ուզնայք առնէ»: Այսպէսով առուզնայք
բառին նշանակութիւնը կ'ըլլայ «առեան-
գութիւն, աղլիկի փախցնել»:

6. Աքալան

Երկրորդ դասը եկեղեցւոյ՝ արքեպիսկո-
պոսը. կարգէ նոցա արքականու պնդնաւոր
և շուրջառ և եմփորոն չորեքկրկին (էջ
253):

Հատուածը ճիշտ տպուած չէ. պէտք է

սրբագրել այսպէս. «Երկրորդ դասը եկե-
ղեցւոյ՝ արքեպիսկոպոսը. կարգէ նոցա
արքական ու պնդնաւոր և շուրջառ...»:

Այսպէսով արքական կ'ըլլայ տեսակ մը
եկեղեցական զգեստ, ինչպէս կը նկատէ
նաև Բաստամեան. «արքական... թերևս
յունական բառ է, բայց աղճատուած, և
պէտք է նշանակէ ժամաշապիկ»:

7. Աքիսն

Այլ թէ մարդոյ լինիցի ջորի խեռական
և կամ ձի կիցորնկէց կամ մարդակեր...
(էջ 418): — Ծանօթութեանց մէջ կը յի-
շուի որ կիցորնկէց բառին դէմ ուրիշ ձե-
ռագիր մը ունի կիցրնկէց, երկրորդ մ'ալ
ազնան: Այս վերջինը հայերէն նոր բառ
մ'է, որ սակայն պէտք է ուղղել աքիսն
«աքացի զարնող, կիցրնկէց», աք «ոտը»
և հանել բառերէն կազմուած:

8. Գաղչեր

Չգնատ է նոցա կտաւ շտուի (այսպէս
ուղղել նոսրի բառը) ըղորկ և վարշամակս,
որ է փակեղն, և գաղչեր յոտան և զօտի
ռակի կրկին (էջ 264):

Բնագրին մէջ թէև տպուած է գաղչեր,
բայց նոյն էջին ծանօթութեանց մէջ Բաս-
տամեան քանի մը անգամ գաղչեր ձևը կը
գործածէ և յատկապէս ալ կը յիշէ որ
մէկ ձեռ. ունի շաղչեր: Ասկէ կը հետե-
ցնեմ որ գաղչեր տպագրական սխալ մ'է,
ինչպէս պիտի երևայ նաև յաջորդ համե-
մատութիւնէն:

Չեռագիրներէն մէկ քանի հատը այս
հատուածը ուրիշ ձևով կը դնեն. «Վար-
շամակս և կարթապատս ճարմանդաւ»: Ասիկա,
ինչպէս Բաստամեան ալ կը նկա-
տէ, գաղչեր բառին բացատրութիւնն է:
Կարթապատ բառը Առձեռնի մէջ կը մեկ-
նուի «ճիւղեր փաթթող» (իբր ածական),
որ ուղիղ չէ: Աւելի ուղիղ է Բաստամեան,
որ կը մեկնէ «պաճոյճ, սոնապան»: Բառը
կը ծագի կարթ «ոտը» բառէն (Ոսկ. ա.
կոր), որուն հետ հմմտ. վրաց. կարթի,

կարսի «ջիզ, երակ, սրունքին գէր մասը, ուրը», սակարբոյի «ծունկի կապ»:

Ըստ այսմ գաղչեր կը նշանակէ «սոնապան»:

Այս բառը Ռուբինեանց ժամանակ փոխ առնուած է եւրոպական լեզուէ մը. հմմտ. իտալ calza «գուլպայ», calzare «կօշիկ», որ կու գայ լատ. calceus «կօշիկ» բառէն. ասկէ ձևացած են յն. κάλτος «կօշիկ», ֆրանս. chausse, chaussure, թրք. çalçın «սոնապան»:

9. Եսկոպօտիրայ

Հինգերորդ (դաս պալատական պաշտօնէից) եսկոպօտիրայն, որը լինին մեծահասակը և ունին վաճառ կմբաւորս... (էջ 263):

Ձանազան ձեռագիրներու ընթերցուած ներքն են՝ եսկոպօտիրայն, եսկոպօտիրայն, Սմբատ Գունդատապալի թարգմանութեան մէջ պրոցաշնէ:

Բաստամեան կը դժուարանայ ստուգաբանել բառս:

Թերեւս կարելի ըլլայ ուղղել եսկոպօտիրոս, իբր յն. εὐσχοπότερος «լաւ նշանառու»:

10. Թեզնիւթեան

Ձգեստ է նոցա գրատը կտաւիք և քեզն է քերանն զիպակաւ (էջ 266):

Մէկ ձեռագիր ունի «գրատը կտաւիք և թեզանիքն զիպակաւ»: Ըստ իս պէտք է ուղղել քեզնեքեան «թեզանիքին՝ թեւերուն քերանը՝ ծայրերը»:

11. Խիշտ

Ձոսկի տէգան ունին, այսինքն՝ զոսկով կազմած խիշտս (էջ 263):

Խիշտ «տէգ, նիզակ» ծանօթ էր մեզ միայն իշտատոր «նիզակաւոր» բառին մէջ, արմատական ձևը հոս միայն կը գտնենք:

== պրս. خِشต์ xīst «նիզակ» (Հիւպշ. 159):

12. Խումար

Յաղագս դատաւտանաց այսաճարաց և այլ խելաթափաց սպանութեան (էջ 179): — Ձեռագիրներէն մէկը կը զրէ ասոր տեղ՝ «վասն զիւաճարաց և այլ խումարն ու սպանման». պէտք է կարդալ «վասն զիւաճարաց և այլ խումարն ու սպանման» (խումարնու բառը առնելով յոգնակի սեռ. հոլով. յոգ. ուղ. խումարնի, սեռ. խումարնու):

Կամ ի ծի՝ որ խիտ իցէ՝ հարկէ նլաւն (այսինքն՝ եթէ մէկը ստիպէ մէկուն խստերախ ծի հեծնել) (էջ 432). — Նոյն ձեռագիրն ունի «կամ ի խումար ծի հեծուցանէ»:

Այլ թէ մարդոյ լինիցի չորի խեռական (էջ 418). — Նոյն ձեռագիրն ունի «այլ թէ մարդոյ լինի չորի խումար»:

Այս օրինակներուն մէջ խումար իբր համապատասխան զրուած է՝ առաջինին մէջ «խելաթափ», երկրորդին մէջ «խիտ, խստերախ», երրորդին մէջ «խեռական» բառին համար: Երեքն ալ գրեթէ մի և նոյն բաներն են որով խումար բառին նշանակութիւնը կ'ըլլայ «խենթ, զիծ» (թէ՛ մարդու և թէ՛ ձիւ համար ըսուած): Ասիկա նոր առում մ'է միայն ծանօթ խումար «զարթխում, հարբած» բառին:

13. Կիսաթուր

Գործածուած է մէկ անգամ միայն երկու ձեռագիրներու մէջ. «Որ է կիսաթուր ներքև հալ ունին» (էջ 262): Պէտք է ուղղել «Որ է կիսաթուր ներքև հալաւնին» (զգեստին տակ պահուած կարծ թուր՝ քացարորայ):

14. Կիսալլաստակ

Մէկ ձեռագիր մէջ՝ լուսանցքի վրայ կը գտնենք այս բառը՝ իբրեւ քացատրու թիւն հարակաշ բառին (էջ 432): Որով կիսալլաստակ կը նշանակէ «աշխատութեան մը, յատկապէս երկրագործութեան մէջ, կիսովի բաժնեկից ընկեր, կիսբար»:

15. Կռփիչ

Վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեացին... և նախահոգութեամբ զչափս և զկշիռս և զոյգս նորա դիցեն... կարգեացեն և կոփիչս միշտ որոնել և տեսանել, զի մի՛ նենգութիւն ինչ արասցեն (էջ 435):

Այս օրինակէն կ'երևայ որ կոփիչ կը նշանակէ «առևտուրի, սակազնի և չափի ու կշիռքի վրայ հսկող ոստիկան» (Պօլսոյ քոմիսիօններուն նման):

Նոյն բառը կոփող ձևով գործածուած է անգամ մ'ալ էջ 439, «Այլ զգողացեալն՝ չորեքկին (վարեցեն) և ի կոփողաց յանդիմանութիւն լիցի նշաւակաց»։ Հոս կոփող բառին դէմ երեք ձեռագիր իբր քաղաքապետութիւն կ'աւելցնեն «այսինքն՝ մուհթասիբայաց (մուխթասայաց)», որով պէտք է հասկնալ արաբ. *مختاب* muhtasib «հին ատենի քաղաքապետ՝ որ էր միանգամայն ոստիկանապետ»։

16. Հանգանակող

Ապա թէ չարաբարոյ իցէ և կամ պոռնիկ, կամ հանգանակող և արբեցող... (էջ 198):

Որդիս մեր այս խեղ է և անզգամ և ոչ լսէ ձայնի մերում. հանգանակող է և արբշիռ (էջ 385):

Այս երկու օրինակներուն մէջ՝ ալ հանգանակող մեզի ծանօթ նշանակութիւնը չունի, այլ «չռայլ, զեղիս» իմաստով գործածուած է։ Այնպէս որ մինչև անգամ ձեռագիրներէն ոմանք (առաջինին մէջ 1 ձեռ., երկրորդին մէջ 3 ձեռ.) անոր տեղ ունին պարզապէս հարկանող։

17. Հատուածով

Արուեստաւորք ամենայն ըստ որում և իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով (էջ 436)։ Հատուածով գործել կը նշանակէ «կտորի՝ գործի հաշուով բանիլ» (և ո'չ թէ օրականով կամ շաբաթականով)։

18. Հացամեծար

Գողը կամ ասպնջական իւր... մահու մատնել արժանի լիցի, զի հնացեալ աւազակն և իւր հացամեծարն միշտ լինին ի մահ դատապարտեալք (էջ 334):

Հոցամեծար Առձ. բառարանին մէջ մեկնուած է «սեղան կանչուած»։ Այս նշանակութեամբ բառը թերևս ուրիշ տեղ գործածուած է։ Բայց վերի օրինակին մէջ հացամեծար կը նշանակէ «գողի ասպնջական, գողին հաց և տեղ տուող. տնկ. խլրարգ եսրաղը»։

19. Հրոս

Որ առևանգս առնեն, կալցեն զկինն և անդրէն ցհայր իւր. և ցմայր իւր տացեն, և տուգան տացն... Եւ որս հրոս երթեալ իցեն և օգնականք որս փեսային, առայրն (իմա մարդ զլուխ, իւրաքանչիւրը) հարիւր զրամ տուգան տացեն, և զհրոսին զրամն զկէսն յեկեղեցին տացեն և զկէսն կարօտելոց (էջ 199):

Սոյն հատուածին մէջ յիշուած հրոս բառը ունի ՆՀԲ և Առձեռն՝ «կաւատ, սիրողի միջնորդ» նշանակութեամբ։ ՆՀԲ բառը կը ստուգարանէ յն. *هروس* «սէր, կիրք» կամ հրոս, հրոսակ բառերով։ Բայց ինչպէս վերի վկայութիւնը կը ցուցնէ, հրոս ամենին «կաւատ» նշանակութիւնը չունի։ Հատուածին մէջ կը խօսուի աղջիկ փախցնելու և ո'չ թէ պոռնկութեան վրայ։ Առևանգողը կ'ունենայ քանի մը կտորիձ ընկերներ, որոնց գործը ո'չ թէ կաւատութիւն է, այլ կոխ։ Ասոնք են որ կոչուած են հրոս։ Հայերէնի մէջ արդէն կայ հրոս «հէն, ասպատակ, զօրք» իմաստով։ Վերի նշանակութիւնը ասոր երկրորդ առումն է միայն։

20. Մալալ

Եթէ կռուիցին արք և մին պատահականատար լինել և յանդգնեալ փետուիցէ զմօրուս կատարելոյն... (էջ 329)։ — Այս

ամբողջ յօդուածը երկու ձեռագիր հետեւեալ ձևով կը գրեն. «Եթէ կոտին արք երկու և մինն մարգ լինի և մինն կաւ տարեալ, և ձգէ մալազն և փետէ զմօրուք կատարելոյն, դատաստան լիցի՝ որ կտրեն զմալազին մազն երկու տարպալ... ապա թէ յաւազ մարդոյն եղև պատճառ կովոյն՝ կէս վերժուցն խնդրեսցի ի փոքրն...»

Մարգ բառին իբրև հոմանիշ են դրուած «անկատար, փոքր». իսկ իբրև հակառակ չկատարեալ և աւագ»։ Նկատելի է նոյն պէս որ մարգը կը փետտէ կատարեալին մօրուքը, և թէև պատժին մէջ ակն ընդ ականի սկզբունքը կը պահուի, բայց մալազին մազը միայն կը կտրեն և ո՛չ մօրուքը։ Ասկէ կը հետևի որ մարգ կը նշանակէ «ոչ—չափահաս, դեռ մօրուքը չեկած մարդ»։

21. Յայտակարար

Ռեքինարը, որը զայտակարարսն կարճան առաջի արքային (էջ 267)։

Կը նշանակէ «զեկուցագիր, կամ տեղեկագիր»։

22. Շարժել

Յաղագս դատաստանաց մանկանց եթէ զրաւու պատճառաւ զմիմեանս շարժեն՝ ի բարձանց ի խոնարհ վազել և ընդ զժուարս և ընդ ձինս և ընդ այլ ինչ այսպիսի գնալ (էջ 323)։

Սովոր են երիտասարդը վայրապար զմիմեանս շարժել՝ բառնալ ինչ ծանունս, որպէս քարինս և այլ այսպիսիս (էջ 323)։

Եթէ որ շարժեացն՝ ինչս եղ ի գրաւու յայտնի և յայնմանէ որ պատրեալ փասեցաւ... (էջ 323)։

Այս բոլորին մէջ շարժել կը նշանակէ «ըդդել, յորդորել (գրաւ գալով, պէս բռնելով)»։ Ասիկա կ'երեւայ նաև յաջորդ տողերէն, որ նոյն յանցանքին պատիժը կ'որոշեն. «Եթէ յասացելոցդ և յայդպիսեացդ պատահի մանկանց, ամբն (տարի-

քը) ըստ սպանմանն դատիցի յորդորողին»։ Վերջին բառին տեղ երկու ձեռագիր ունին շարժողին։

23. Պատիկոս

Այս բառը զործածուած է մէկ անգամ երեք ձեռագրի մէջ՝ հետեւեալ ձևով. «Իշխանք և այլք եթէ յաւելի դատեն (իմա աշխատցնել, բանեցնել) զպատիկոսն, որ ընդ ձեռամբ իւրեանց իցեն և հանդիպի մեռանիլ, արեան գինք առցեն»։ Այս ուրէնքի վերնագրին է՝ «Յաղագս դատաստանաց փասեցելոց շինականաց ի տէրանց առաւել քան զսովորականն լեալ հրաման», իսկ օրէնքին ընագիրը հետեւեալ ձևն ունի. «Եւ եթէ աւելի քան զօրէնն անգլթարար հրամայիցէ զործել և այնու փաս մահու հասցէ ի տերանց ընդ հարկու անկելոց, պարտապան լիցի արեան» (էջ 330)։

Այս բոլորէն կը տեսնուի որ պատիկոս կը նշանակէ «տէրոջ մը ձեռքին տակ գտնուող և անոր հարկատու շինական»։ Փոխառեալ է յն. παροικος բառէն, որ կը նշանակէ «քաղաքի մը կամ գաւառի մը մէջ հաստատուած օտար պանդուխտ մարդ, որ զուրկ է քաղաքային իրաւունքներէ»։

24. Պատառել

Յաղագս դատաստանաց գողոց որ զտուն պատառեն (էջ 351)։

Պատառել հոս կը նշանակէ «կողոպտել». այս նշանակութիւնը կենդանի է մինչև այսօր Լիւբլիոյ բարբառին մէջ (Չէլթուն, Մարաշ). օր. բազմալիչեկ խեղճան պատիյի իյրոնք «երթանք թագաւորին գանձարանը կողոպտենք», կոյրոն գիշիյով կա պատիյի բազմալիչեկ խեղճան «կ'երթան գիշերով կը կողոպտեն թագաւորին գանձարանը» (Բազմ. 1897, էջ 469)։

25. Պոռքսետորայ

Պալատական պաշտօնեայ մ'է, որուն պաշտօնն է «յորժամ վախճանի արքայն՝

նորա են որք զգագաղան և զգահոյսն բառ-
նան» (էջ 263):

Այս բառը ձեռագիրներուն մէջ շատ
խաթարուած է. ունինք պոքրութեան, պո-
պոստութեան, պոստութեան, պոքրութեան,
պոքրութեան, իսկ Սմբատ Գունգատապի թարգ-
մանութեան մէջ պոքրութեան: Բաստաման
լաւագոյն ձեռք կը համարէ պոքրութեան
(թէն բնագրին մէջ կը գնէ պոքրութեան)
և կը հանէ լատ. portitor «կրող, տանող»
բառն:

Լատիներէն այս ձեռք շատ տարբեր է
վերիններէն. ո՛ւր է քս ձայնը՝ որ գրեթէ
բոլոր տարբերակներուն մէջ ալ կայ:

Բայտ իս պէտք է ուղղել պոստութեան,
իրը լատ. prosequi բառն, որ ի մէջ
այլոց կը նշանակէ «մեռելի մը յուղար-
կաւոր ըլլալ», որմէ prosequator «մե-
ռելի յուղարկաւոր»:

26. Ռեքլուս

Ռեքլուսը՝ որք՝ զայտակարարան կար-
գան առաջի արքային (էջ 267):

Չեռագրական տարբերութիւններն են
սեքլուսը, սեռլուսը: Բաստաման կը
հանէ լատ. requiro «քննել» բառն, որ
իմաստով անյարմար է: Կը կարծեմ որ
աղաւաղուած ըլլայ լատ. recitator բա-
ռն, որ կը նշանակէ «շատարանի մէջ
կայլն»՝ զեկուցագրերն ու տեղեկագրերը
կարդացող անձը:

27. Սքուլար

Եթեքերոյ դաս պաղատին՝ սքուլարն.
և զգեստ է նոցա զբառը կտաւիք... ունին
նիզակա... և սեռա ասպարս (էջ 266):

Թէն Բաստաման կը գրէ որ բոլոր
ձեռագիրներն ալ ունին այս ընթերցու-
ածը, բայց ըստ իս պէտք է ուղղել սքուլար,
իրը լատ. scutarius «վահանակիր. ազ-
նուական» որ կ'ընկերանար ասպետին և
անոր վահանը կը կրէր. écuyer»:

28. Տիրել

Եթէ պատահի ամուսնութեամբ ոչ տի-
րել կնոջ առնն, ըստ հրամանի կանոնաց
թէ կամ լիցի կնոջն՝ ի միասին զտա-
նակն կայցեն, և եթէ ոչ՝ դատաստան
լիցի բաժանմանն (էջ 97):

Տիրել բառին իմաստը ճիշտ կը պար-
զուի, եթէ ի նկատի առնենք օրէնքին
վերնագիրը. «Յաղագս դատաստանաց առն
և կնոջ, որք, անկար գոն յոճաւեղ զկու-
ստրիսն»:

29. Փոխիլ

Թէպէտե և բժշկաց ասի փոխիլ ախտից
յորոց հոտ է և ի բորոտ ոչ լինի... սա-
կայն կանոնք փոխիլի զախտն ցուցին (էջ
189): — Զեռագիր մը ունի փոփոխիլ,
փոփոխիլ:

Փոխիլ կը նշանակէ հոս «հիւանդու-
թիւն մը մէկէն միւսին անցնիլ վարակ-
մամբ», փոխիլի «վարակիչ»:

Հատուածը կը թարգմանուի. «Թէն
բժիշկները կ'ըսեն թէ հոտ ունեցող հի-
ւանդութիւնները միայն վարակիչ են և
բորոտը հոտ չունի... սակայն կանոն-
ները կը ցուցնեն որ ասիկա ալ վարա-
կիչ է»:

Բառին այս իմաստը գործածական է
մինչև այսօր Ղարաբաղի բարբառին մէջ.
օր. իրադիլ փոխուող ցաւ է. քեզանից եմ
փոխուել:

30. Ռոնել

Եթէ օրէնք զգրաւն ոչ տայ օրնել, որ-
չափ ևս հրաժարեցուցանէ և ի վաշխից
զբաւից (էջ 358):

Օրնել զգրաւ «պարտքի մը փոխարէն
տրուած զբաւը քովը երկար ժամանակ
պահել, ուշացնել»:

Հ. ԱՃԱՌԵԱՆ

Շարայարելի